

Ն. Ա. ՄԿՐՏՉՅԱՆ, Հայերենից փոխառություններ թուրքերենի բարբառներում, Երևան, 2007, 318 էջ:

Թուրքագիտությունը, ինչու չէ, նաև հայագիտությունը հարստացել է մի արժեքավոր ուսումնասիրությամբ, որի պակասը վաղուց էր զգացվում:

Այս գիրքը վկայում է հայ մշակույթի այն մեծ ազդեցության մասին թուրքերենի վրա, որը ոչ մի կերպ չի կարելի ուրանալ: Խոսքը վերաբերում է ոչ թե գրական թուրքերենին, որը մասամբ արհեստական, մշակված լեզու է, այլ ժողովրդախոսակցական, առօրյա հաղորդակցության լեզվին, ավելի ճիշտ՝ բարբառներին: Թուրքերենում առօրյա հարույակցության լեզուն տարբերվում է մշակված գրական լեզվից՝ հարուստ երկրագործության, կենցաղային իրերի, ամասնաբուծության և այգեգործության հետ կապված հարյուրավոր բառերով:

Դեռևս 1902 թ. Հ. Աճառյանը, քննելով հայերենի մի շարք խոշոր բարբառներ (Ղարաբաղ, Վաճ, Նոր Նախիջևան, Կ. Պոլիս), եկավ այն եզրակացության, որ թուրքերենից կատարված փոխառությունների թիվը հայերենում հասնում է 4200-ի:

Փոխառյալ բառերի այսպիսի մեծ քանակ իհարկե չէր կարող զարմանք պատճառել որևէ մեկի. քանի որ հայերի, հույների և այլ փոքրամասնությունների կատմամբ Թուրքիայի վարած բռնաձուլման քաղաքականության պայմաններում, երբ պաշտոնական-պետական լեզուն համարվում էր թուրքերենը, դարերի ընթացքում փոքրամասնություններից շատերը կորցրեցին իրենց մայրենին կամ մայրենի բառապաշարի զգալի մասը:

Պետական պարտադրանքի հետևանքով թրքախոս դարձավ նաև հայերի մի մասը (Ադանա, Կեսարիա, Յոզգաթ, Աֆիոն-Ջարահիսար և այլն), այսինքն՝ թուրքերը մասամբ հասան իրենց նպատակին. իսկ հայերենը պահպանած մի շարք վայրերի բառապաշարը այնքան էր հազեցել թուրքերենով, որ մի քանի տասնամյակ անց այդ տարածաշրջանների բնակիչները մույնպես ենթակա էին կորցնելու իրենց մայրենին:

Վարչատնտեսական բառերից, տերմիններից բացի թուրքերեն էին դարձել նաև սովորական շատ ու շատ բառեր: Թվում էր, թե հակառակ երևույթը բացառված էր: Մինչդեռ ոչ պակաս փոխառություններ ենք գտնում հայերենից կատարված թուրքերենի բարբառներում, ոչ թե պետական պարտադրանքով կատարված, այլ կյանքի անհրաժեշտությամբ թելադրված: Եվ այստեղ կարևորը փոխառությունների քանակը չէ, այլ այն տեսականին, առանց որի չէր կարող գոյատևել թուրք գյուղացին, թուրք հասարակ ժողովուրդը: Այսպես, օրինակ՝ ջոչվոր ժողովուրդը անցնելով նստակեցության, փոխեց իր կենցաղը՝ հայերից ընդօրինակելով երկրագործական բնագավառին առնչվող բառապաշարը՝ գութան, արոտ, արոտ, ակոս, հերկ, խոզան, խոպան, կամն, կամնել, կալսել, տոփան, աղուն, հորիկ, հոտաղ, մարագ և այլն:

Զոչվորական կենցաղը փոխարինվելով նստակեցությամբ, թուրքերի բառապաշարում տնաշինարարական

տերմինների մեծ քանակ առաջացավ, այսպես՝ գերան, հեծան, մարդակ, սողնակ, ցիվ, քիվ, լողքար, պատուհան և այլն:

Գիրքը գրված է գիտական բարձր մակարդակով: Հեղինակը անդրադառնում է նաև նախորդների թույլ տված սխալներին, այդ թվում նաև մեծ լեզվաբան Հ. Աճառյանի, որի հեղինակությունը պատճառ է դարձել, որ կրկնեն նրա սխալները անվերապահորեն՝ դարձնելով դրանք գիտական շրջանառության նյութ (տե՛ս յուր-յուրորդ > yozurt, տան գլուխ - dangalak, էշ - esak, ոռոզ - arik և նման այլ չհիմնավորված փոխառությունները հայերենից, էջ 13-17):

Ն. Մկրտչյանի աշխատությունը արժեքավորվում է նաև պատմական էքսկուրսներով, որոնցից զուրկ են նախորդ նմանատիպ ուսումնասիրությունները: Հեղինակը հայերենից թուրքերենին անցած փոխառությունների համար երկու ուղի է տեսնում: Մեկը՝ սովորական, առօրեական շփումների, համատեղ կեցության ուղին է, մյուսը՝ թուրքացողների բերած հայերեն բառապաշարը, որ գործածվում էր նրանց կողմից՝ մինչև լրիվ թուրքամալը երկու-երեք սերնդի ընթացքում:

Այսպես՝ հայ ժողովրդի համար ճակատագրական եղան հատկապես 16-17-րդ դարերը, երբ Օսմանյան կայսրության նվաճողական քաղաքականությունն ուղեկցվում էր զանգվածային կրոնափոխություններով: Անտանելի հարկային բեռը ոչ մահմեդական հպատակների նկատմամբ հանգեցրեց բռնաձուլման, որի առնչությամբ Ն. Մկրտչյանը բերում է մի շարք վկայություններ ոռու, անգլիացի, ֆրանսիացի դիվանագետներից, ճանապարհորդներից և հայ հեղինակներից (տե՛ս 17-27 էջերը): Այսպես՝ անգլիացի հնագետ-պատմաբան Դ. Հոգարդը, որ անցնում էր Վանից, Բաղեշից դեպի Դիվրիկ ու Երզնիզան (Երզնկա), գյում է իր տպավորություններում, թե բնակչության մեջ

չկար ոչ մի թույլոր մարդ, բոլորը նստակյաց «թուրքեր» էին՝ սպիտակամորթ հայկական դիմագծերով: Նա միշտ թուրք բառը առնում է չակերտների մեջ:

Այնուհետև Ն. Մկրտչյանը բերում է Գ. Սրվանձոտյանցի գրառած՝ Ալևի Կամարակապ բնակավայրի Կաշո գյուղի իրիցկնկա ավանդությունը, որ ինքնասպան է լինում՝ տեսնելով զանգվածաբար մուսուլմանություն ընդունողներին, որոնց արարքը կանխելու նպատակով դիմում է իր ամուսնուն՝ քահանային, սակայն վերջինս իխասափեցնում է իրիցկնկան՝ ասելով, որ ինքը վաղուց է թուրք դարձել: «Վայ քարը, սեն դահա գյավուրջա սոյերսին, բեն չօրդան տաճիկ օլմուշում» («Վա՛յ կնի՛կ, դու դեռ գյավուրերե՛ն ես խսում, ես վաղուց եմ տաճիկ դարձել»):

Բնականաբար, ձուլված հայերը դեռ երկար ժամանակ օգտագործում էին իրենց հայերենը, մանավանդ, երբ թուրքերենում չկային իրենց բերած գործիքների, յրերի համարժեք տերմինները: Ահա հայերեն փոխառությունների այն երկրորդ ուղին, որը հարստացնում էր ժողովրդախոսակցական թուրքերենի բառապաշարը:

Ն. Մկրտչյանը բարձր գնահատական է տալիս թուրքերենում հայերենից կատարված փոխառություններով զբաղվող լեզվաբաններից հատկապես Ա. Պիսովիչին, Ա. Թիթցին, Ու. Բլեզինգին, Ռ. Դանկոֆին և այլն: Վերջինիս գրքում ամփոփված են մինչև 1995թ. իր և նախորդների կողմից հայտնաբերված հայերեն բառերը թուրքերենում, որոնք նրա հաշվումներով 1090 բառ են կազմում:

Ն. Մկրտչյանն ընդգծում է Ու. Բլեզինգի ավանդը, որի երկու գրքերը ոչ միայն գիտական, այլև քաղաքական հնչեղություն ունեն, որտեղ վկայակոչված են համընդհանրապես թուրքերենին անցած մոտ 250 բառ:

Գրքում մի բաժին է հատկացված հայկական ազգային տոների անվա-

նումներին, որոնք հայերից են անցել թուրքերենին և հարատևում են առ այսօր՝ bicek-վիճակ, wartivor, vartuvur-վառթիվօռ//վարդուվուր//վարդեվոր (վարդավառ, ջանգյուլումի սովորությունը-mâni ile yüzük çekmek oyunu-ծաղիկներով մատանի քաշելու խաղ, այսինքն՝ դա ջանգյուլումի վիճակահանության սովորությունն է, որը պահպանվել է աղջիկների մոտ):

Գրքի նորություններից պիտի համարել թուրքերենում ռուսերեն բառերի առկայության մասին Ն. Մկրտչյանի կարծիքը, որ պնդում է, թե դրանք փոխանցվել են հայերենի միջոցով, որովհետև այդ լեզվի բառերը բացակայում են թուրքերենի այն տարածքներում, ուր չկա հայ բնակչություն: Դրանք ռուսերեն 60 բառեր են:

Ն. Մկրտչյանը առանձին բաժնում ներկայացնում է այսպես կոչված «միջազետքյան» (աքքադերեն, արամեերեն, խուրիերեն) մի քանի տասնյակ բառեր, որոնց միջնորդ օղակը միայն հայերենը կարող էր լինել, քանի որ հին դարերում թուրքեր դեռևս չկային և չէին կարող շփվել սեմիտների, աքքադացիների հետ: Դրանք առնչվում են երկրագործությանը, բույսերին, կենդանիների անվանմանը և այլն:

Գրքի հետաքրքրական հատվածներից են հայ մշակույթի ազդեցությունը թուրք մշակույթի վրա ուրացողների ոչ գլխական ստուգաբանությունները: Այսպես՝ գրաբարից ունենք ավանդված *օթեկան*, *օթեկ* «նախորդ օրվանից մնացած» բառը, որ փորձում են ստուգաբանել որպես թուրքերեն oteğün, gün «օր» բառից կազմված, բայց անբացատրելի է մնում բառի առաջին՝ ote մասը (տե՛ս էջ 63):

Հասան Էրենը իր «Թուրքերեն բառարանում» անհեթեթ բացատրություն է տալիս հայերեն *քալին* «հնացած, անպետք, նետվելիք, մողայից ելած» բառին՝ համարելով այն ֆրանսերեն (Türkçe Sözlük, 2 հ., էջ 1416):

Ավելի ծիծաղելի է հայերեն *ժախլուչ* բառի ճակատագիրը: Նախ այն դարձել է zangoç «ժամհար, եկեղեցու զանգ հնչեցնող», իսկ Գագիանքեպի բարբառում հնչում է camgöz «ապակյա աչքով» (տե՛ս էջ 63-64):

Ամփոփելով ասենք, որ գրքի արժանիքները շատ են. հենց միայն այն փաստը, որ գիրքը մասնագետներին է մատուցում հայերենից 500-ից ավելի նոր փոխառություններ, որոնք չկան նախորդների մոտ, խոսում է հեղինակի երկկողմանի՝ թուրքագիտական և հայերենագիտական խորը կարողությունների մասին: Սույն գրքով հայ թուրքագետները լիարժեք տեղեկատվություն են ունենում իրենց ձեռքի տակ հայերենից թուրքերենի բարբառներին անցած բառերի քանակության մասին:

Գրքի արժանիքները կարելի է թվարկել հետևյալ կետերում.

ա) բարձր գնահատելով նախորդների նմանատիպ աշխատանքները՝ ճշգրտումներ է կատարում նրանց թույլ տված սխալներում, որը շատ կարևոր մի նորույթ է մասնագետների համար:

բ) Հեղինակը առաջինն է մատնանշում մուսուլմանացած հայերի միջոցով թուրքերենի բարբառներին անցած հայերեն փոխառությունների հարցը:

գ) Հեղինակը վկայակոչումներ է քերում օտարագրի (ռուս, անգլիացի, ֆրանսիացի) դիվանագետների և ճանապարհորդների, ինչպես նաև հայ հեղինակների գործերից հայերի զանգվածային թուրքացման (խլամացման) վերաբերյալ, որ նախորդների մոտ բացակայում է:

դ) Թուրքերենի արևելյան բարբառներում առկա ռուսերեն բառապաշարի իրողությունը համարում է հայերենի միջնորդության արդյունք, քանի որ դրանք այլ բարբառներում չեն օգտագործվում:

ե) Նմանապես հեղինակը առանձնացնում է միջազետքյան մշակույթից ե-

կող մի խումբ բառեր, որոնք կարող էին անցնել թուրքերենին հայերենի միջնորդությամբ:

զ) Հեղինակը նոր ձևով է դնում բնաձայնությունների և մանկական բաների (Lallwörter) առաջացման հարցը, քանի որ դրանք երկու լեզուներում էլ կարող էին անկախ գոյացություններ լինել և ոչ փոխառությունների արդյունք:

է) Հեղինակը իրեն նույնպես ան-

սխալական չի համարում, հատկապես պարսկերեն ծագում ունեցող բառերի հարցում, քանի որ մի շարք այդպիսիներ կարող էին թուրքերենին անցնել Միջին Ասիայում և ոչ թե հայերենի միջնորդությամբ: Այսպես՝ գազար, գիլա, դայեակ, թերիակ, սվաղ և այլն: Գերադասելի էր, որ մման բառերից գիրքը գերծ լիներ:

Ռ. Ս. ՂԱԶԱՐՅԱՆ